ՀԱՅՈՑ ՏՈՄԱՐԻ ՇՈՒՐՋԸ

Հ. Ս. ԲԱԴԱԼՅԱՆ

1. Հայկական տոմարի սկզբնավորությունը

Հայոց տոմարը հին ծագում ունի, սակայն պատմաբանների և տոմարագետների կողմից դեռևս ինչպես հարկն է չի հիմնավորված այն հարցը, թե երբ են հայերը սկսել իրենց ինքնուրույն տոմարական հաշվումները։ Հետաքրքրական է մատնանշել Խորենացու վկայությունն այն մասին, որ մինչև Հայոց Արտաշես թագավորի ժամանակը (189—160 թթ. մ. թ. ա.) անուշադրության էին մատնված շաբաթվա, ամիսների ու տարիների հաշվումները։ Խորենացին այդ առթիվ գրում է. «Գիտութեանց կամ անփոյթ արարեա ք, և կամ ոչ հասեալք. զշաբաթուց ասեմ և զամսաց և զտարեաց բոլորմանց»[1]։ Այստեղից պետք է եզրակացնել, որ Արտաշեսի ժամանակ հավասարար առանձնահատուկ ուշադրություն են դարձրել տոմարագիտության զարգացմանը։ Այս ցույց է տալիս նաև, որ այդ ժամանակաշրջանում հայերն ունեցել են ինքնուրույն տոմար։ Ենթադրվում է, որ հայոց բուն թվականը սկսվել է 2492 տարի մ. թ. ա., նավասարդ ամսի 1-ին (որը համապատասխանում էր օգոստոսի 11-ին) և կապված է եղել Հայկ նախահոր հետ, որը, իբր, Բելին հաղթելուց հետո հրամայել է, որ հաղթանակի օրը նոր դարագլուխ համարվի և տոնվի ամեն տարի։

Որոշ հետազոտողներ, առանց հիմնավոր տվյալների, ենթադրում են, որ նախքան արեգակնային օրացույցին անցնելը, հայերը հնագույն շրջանում օգտվել են լուսնային և լուսնաարեգակնային օրացույցներից, այդ նպատակի համար օգտագործելով լուսնի փուլերի կրկնման 19-ամյա պարբերաշրջանը։ Ավելի հավանական է, որ հայերը արեգակնային օրացույց են ունեցել նախքան լուսնի 19-ամյա պարբերաշրջանի հայտնաբերումը։ Այդ է ապացուցում այն փաստը, որ հայերը տոմարի սկզբնավորման շրջանում տարին հավասար են համարել 360 օրվա, 12 ամսվա, յուրաքանչյուր ամիսը բաղկացած է եղել 30 օրից։ Այստեղից կարելի է կռահել, որ հայերը սկզբից ևեթ ունեցել են արեգակնային օրացույց։ Իսկ ինչ վերաբերում է տարին 365 օրվա հավասարեցնելուն և 13-րդ ավելյաց ամիսը (կազմում էր 5 օր) մտցնելուն, ապա պետք է նշել, որ հայերի մոտ այն տեղի է ունեցել համեմատաբար ուշ շրջանում։

Հայկ նախահոր անվան հետ կապված առասպելական թվականը որոշ տոմարագետների և պատմաբանների կողմից կոչվել է «Հայկա թվական» կամ «Հայկա շրջան»։ Ըստ հնագույն մի ավանդության, որը գրի է առել հայ ականավոր գիտնական Անանիա Շիրակացին, հայկական ամիսների անունները կապված են եղե Հայկի տղաների և աղջիկների անունների հետ։ Այդ մասին Շիրակացին գրում է. «Զի Հայկ ոմն անուն աղեղնաւոր Հսկայ՝ յազգէ Յաբեթի

---

1 «Մովսէսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1913, էջ 188։

որդոյ նոյն, եկեալ ի Բարիլոնէ տիրեալ Հայոց։ Եւ բնակեալ ի Հայս և յանուն նորա կոչեցան Հայք. նոյնպէս որդոյ Է դստերաց իւրոց եղ անուանս. զոր առեալ հայոց զանուանս ուստերաց և դստերաց նորա եղին ի վերայ ամսոցդ՝ վասն մեծարանց հօրն ու զավակացն,—և են այսոքիկ։ Նավասարդի, Հոռի, Սահմի և Մահեկի, Արեգ, Մարերի, դստերք էին Հայկին։ Տրե, Քաղոց, Արայ և Հրոտից որդիք էին Հայկին։ Իսկ Մարզաց և Հարևանց, զոր այժմ Ահկի կոչեն, այս ի զործոց անուանեցան զի ընդ այն ժամանակս ամառնայինք էին սոքա»[2]։

Հայերը մինչ քրիստոնեական թվականի ընդունումը, ըստ երևույթին, առաջնորդվել են «բուն հայոց» թվականով, որը մինչև հիմա էլ օգտագործվում է որոշ օրացույցներում։ Այսպես, օրինակ, 1962 թ. էջմիածնի օրացույցում գրված է. «Բուն թվականին հայոց՝ 4454—4455». դա նշանակում է, որ 1962 թ. համապատասխանում է «բուն հայոց» թվականության 4454—4455 թթ., որովհետև, ինչպես ասացինք, այն սկսած պետք է լինի 2492 տարի մ. թ. ա. (4454—1962 = 2492)։ Քանի որ հնում հայերը օրացուցային տարին ընդունել են հավասար ոչ թե 365¼, այլ՝ 365 օրվա, ապա դա նշանակում է, որ գոյություն է ունեցել շարժական տոմար, որի հետևանքով յուրաքանչյուր չորս տարին մեկ անգամ Նավասարդի 1-ը՝ նոր տարին, մեկ օրով արևադարձային տարվա նկատմամբ առաջ էր ընկնում, որովհետև օրացուցային և արևադարձային տարիների տարբերությունը հավասար է եղել մոտավորապես 6 ժամի և չորս տարվա ընթացքում մեկ օր է կազմել։ Հետևաբար, նոր տարվա սկիզբը շարժական օրացույցի դեպքում պետք է շրջեր տարվա բոլոր օրերում և երբ չեղումը հավասարվում էր մեկ տարվա, նոր տարին՝ Նավասարդ ամսի 1-ը, կրկին համընկնում էր օգոստոսի 11-ին։ Այդ համընկնումը կրկնվում է յուրաքանչյուր 1460 տարին մեկ անգամ, որովհետև ¼ օրը բազմապատկած 1460-ով հավասար է 365 օրի։ Նման հանդիպումներ «բուն հայոց թվականի» հետ, սկզբից հաշված, առաջին անգամ տեղի է ունեցել 1032 տարի մ. թ. ա. (2492—1460 = 1032), և երկրորդ հանդիպումը՝ 428 թվականին մ. թ. (1460—1032 = 428)։ Բնական է, որ նշված հանդիպումների ժամանակ, նախքան անշարժ տոմարին անցնելը, առաջանում էր ավելամուտ կամ այսպես կոչված «նահանջ» տարի, որը հավանաբար օրացուցային հաշիվներից դուրս էր մնում խառնաշփոթություն չստեղծելու համար։ Ելնելով հայոց տոմարական հաշիվներից, պարզվում է, որ դառնում, որ հեթանոսական շրջանից սկսած հայերի մոտ երկու ամանոր է գոյություն ունեցել, որոնցից մեկը մարտ ամսին էր, գարնանամուտին և համարվում էր անշարժ տոմար։ Այն օգտագործել են հիմնականում եկեղեցական-կրոնական շարժական և անշարժ տոների համար որոշակի ժամանակ սահմանելու նպատակով։ Ամենայն հավանականությամբ այդ օրացույցի հաշվումներով նոր տարին սկսել են մարտի 21-ին կամ հայոց Արեգ ամսին։ Այս անշարժ օրացույցի տարին շատ հաճախ կոչվել է «սրբազան», իսկ շարժական օրացույցի տարին՝ քաղաքացիական։ Հայերը, հավանաբար, 325 թ. օգտագործել են նաև Հուլյան տոմարը, սակայն ենթադրվում է, որ քրիստոնեական թվականը նրանք հաշվել են երկու տարի առաջ, որը և օգտագործելիս են եղել հայ մատենագիրները[3]։ Այս դեպքում համապատաս-

2 Անանիա Շիրակացի, Տիեզերագիտութիւն և տոմար, Երևան, 1941, էջ 77։

3 Տե՛ս Ա. Աբրահամյան, Հայ գրի և գրչության պատմություն, Երևան, 1959, էջ 261—268։

խան հաշվումներ կատարելիս պետք է ի նկատի առնել նաև վերը նշած երկու տարվա տարբերությունը։

Վերոհիշյալ տվյալներից կարելի է եզրակացնել, որ հայերը տոմարագիտության մասին գաղափար են ունեցել մ. թ. մոտ 3000 տարի առաջ։ Թեև հայոց տոմարը հին ծագում ունի և համեմատաբար զարգացած տոմար է եղել, այնուամենայնիվ որոշ ուսումնասիրողներ առանց շուրջ փաստարկումների ջանացել են ցույց տալ, թե հայերն այդ ժամանակ չէին կարող ինքնուրույն զարգացած տոմար ունենալ և իրենց տոմարը հավանաբար ընդօրինակել են եգիպտացիներից։ Իրենց այս տեսակետը հիմնավորում էին նրանով, որ հայոց օրացույցի ամիսների և օրերի թիվը նման է եգիպտականին և որ հայերի զարգացման աստիճանը համեմատաբար ցածր է եղել ինքնուրույն տոմար ունենալու համար։ Այս առթիվ պրոֆ. Լ. Սեմյոնովը գրել է. «Հին հայոց երկրում նման տիպի տոմար ստեղծելու պայմաններ չեն եղել։ Նման տիպի տոմար կարող էր զարգանալ տնտեսական բարձր աստիճանի հասած մարդկային հասարակության մեջ, ինչպիսին էր Եգիպտոսը, և պարզ է, որ հայերը պետք է ընդօրինակած լինեն կամ անմիջապես Եգիպտոսից կամ թե՝ մի այլ ժողովրդից, որը իր հերթին ընդօրինակել էր Եգիպտոսից»[4]։ Այս կարծիքը հիմնավորված կարելի համարել, որովհետև ամբողջությամբ վերցրած հայոց տոմարն ավելի կատարյալ է եղել, քան եգիպտականը։ Հայտնի է, որ Եգիպտոսում ընդունված սովորություն է եղել տասնօրյա և հնգօրյա շաբաթների գործածությունը. հին եգիպտացիները չեն ունեցել յոթնօրյա շաբաթ, ինչպիսին շատ հին ժամանակներից սկսած գործածվելիս է եղել հայոց տոմարում։ Եվ, բացի այդ, հայոց ամիսների օրերն ունեն առանձին անվանումներ, որոնք հիմնականում հայկական ծագում ունեն։ Առանձին անուններ ունեն նաև օրվա 24 ժամերը։ Ավելացած ամսի հինգ օրերը կոչվելիս են եղել հեթանոսական շրջանից հայտնի հինգ մոլորակների անուններով։ Նման անվանումներ եգիպտական օրացույցում, և առհասարակ մյուս ազգերի օրացույցներում, մեզ հայտնի չեն, բացառությամբ հին պարսկական օրացույցի, որի ամիսների օրերը նույնպես ունեցել են անուններ։ Այսպիսով, հայոց և եգիպտական տոմարի ամիսների անունների միջև նմանություն չկա։

Ուշադրության պետք է առնել նաև այն, որ արևադարձային կամ, ինչպես ընդունված է ասել, արեգակնային տարին հայերը հավանաբար որոշել են ինքնուրույն, առանց եգիպտացիներին ընդօրինակելու։ Այս տեսակետի օգտին է խոսում նաև այն հանգամանքը, որ հայերի մոտ Օրիոնի համաստեղությունը կոչվել է «Հայկ» (կապված առասպելական Հայկ նախահոր անվան հետ)։ Այսպիսի հետևությունը հավանական է թվում, որովհետև հայերի բնակությունն հաստատած վայրերի աշխարհագրական լայնության համար Հայկ համաստեղության պայծառ աստղերի հելիոտիկ ծագումը դիտելը մատչելի է։ Դա տեղի է ունենում մոտավորապես օգոստոս ամսի սկզբներին կամ հայոց տոմարի Նավասարդ ամսին։ Հետևաբար, զարմանալի չէ, որ հայերը, Հայկ համաստեղության աստղերի հելիոտիկ ծագման միջոցով, երկարատև դիտումների օգնությամբ կարողացել են որոշել արևադարձային տարվա մոտավոր տևողությունը։ Ուստի հայերի նոր տարին Նավասարդի 1-ից կամ հռոմեական օրացույցով՝ օգոստոսի 11-ից հաշվելը անկասկած կապված է եղել Հայկ հա-

4 «Մատենադարանի գիտական նյութերի ժողովածու», 1941, № 1, էջ 23

3 Հանդես, № 4

մաստեղության հելիոտիկ ծագման ժամանակի հետ։ Եգիպտացիները նման եղանակով տարվա տևողությունը որոշել են Սիրիուս աստղի՝ Սոթիսի հելիոտիկ ծագումը գիտելու միջոցով։ Ինչ վերաբերում է նրան, որ և՛ հայերի և եգիպտացիների մոտ տարին բաժանվում է 12 ամսվա, յուրաքանչյուրը 30 ական և հինգ ավելյաց օրով, ապա պետք է կարծել, որ այս դեպքում այն կապված է եղել 12 կենդանակերպի համաստեղությունների թվի և Արեգակի՝ մի համաստեղությունից մինչև մյուսը անցնելու տևողության հետ։

Ելնելով վերոհիշյալից, անհրաժեշտ է պատասխանել նաև այն հարցին, թե համաստեղություններին կենդանիների ձևով պատկերացնելու գաղափարն առաջին անգամ որտեղ է առաջացել։ Այս տեսակետից չափազանց ուշագրավ են Օլկոտի[5] աշխատության մեջ բերված մի շարք փաստերը։ Օլկոտը կարծում է, որ աստղային խմբերը կենդանիների տեսքով պատկերացնելը շատ վաղ ժամանակներից է գալիս։ Ենթադրվում է նաև, որ համաստեղությունները կենդանիների տեսքով պատկերացնելու ժամանակներում գարնանային օրահավասարի կետը գտնվելիս է եղել Ցուլի համաստեղությունում։ Աստղագիտական համապատասխան հաշվումները ցույց են տալիս, որ գարնանային օրահավասարի կետը Ցուլի համաստեղության նկատմամբ ներկա դիրքն ունենալու համար նախքան մեր թվարկությունը պետք է անցած լինի մոտավորապես 3000 տարի։ Իսկ դա նշանակում է, որ համաստեղություններին կենդանիների անուններով անվանելը մոտավորապես 5000 տարվա պատմություն ունի։

Աստղագիտական, պատմական և հնագիտական հետազոտությունները ցույց են տալիս միաժամանակ, որ համաստեղությունները կենդանիների անուններով կոչող մարդիկ հավանաբար ապրել են Եփրատ գետի հովտում և Արարատյան դաշտավայրում։ Աստղերի ուսումնասիրությամբ առաջին անգամ ոչ թե բաբելացիներն են զբաղվել, այլ ակկադացիները, որոնք սկզբնական շրջանում բնակվելիս են եղել լեռնային վայրերում և որոնց մոտ ծնունդ են առել սեպագիր գրության և կուլտուրայի սաղմերը։ Նշանավոր հնագետ Մաունդերը, որը լրջորեն զբաղվել է համաստեղություններին կենդանիների ձևով պատկերացնելու հարցով, պեղումների ժամանակ շատ հետաքրքրական հայտնագործություններ է կատարել։ Մեզ հետաքրքրող հարցի առթիվ նա գրել է. «Հետաքրքիր են հնագույն համաստեղությունների արտաքին տեսքի պատկերները. նրանք զբաղեցնում են միայն երկնքի մի մասը, իսկ հարավային կիսագնդում մի ընդարձակ տիրույթ, որը ունի անկանոն շրջանի տեսք, մնացել է միանգամայն դատարկ։ Այդ փաստը բացահայտելու համար, առաջին անգամ Սվարցը արել է շատ սրամիտ ենթադրություն. նա ասել է, որ այդ տարածությունը մնացել է դատարկ, որովհետև համաստեղությունները կենդանիների տեսքով պատկերացնող մարդիկ ապրել են այնքան դեպի հյուսիս, որ հնարավոր չէր տեսնել երկնքի այդ մասը[6]։ Մաունդերի կարծիքով այն մարդիկ, որոնք երկինքը բաժանել են համաստեղությունների, ամենայն հավանականությամբ պետք է ապրելիս լինեին հյուսիսային լայնության 36 և 42 աստիճանների միջև ընկած տարածությունում, այնպես որ համաստեղությունների նշանակման հայրենիքը չէր կարող լինել ո՛չ Եգիպտոսը, ո՛չ էլ Բաբելոնը։ Այնուհետև Օլկոտը նշում է, որ պատկերած համաստեղությունների շարքում

[5] У. Т. Олькотт, Легенды звездного мира, 1911, էջ 8։

[6] Նույն տեղում։

չկան փիղ, ուղտ, հիպոպոտամ, կոկորդիլոս և վագր անուններով համաստեղություններ, հետևաբար կարելի է ենթադրել, որ ոչ Հնդկաստանը, ոչ Արաբիան, ոչ էլ Եգիպտոսը չէին կարող հանդիսանալ այն վայրերը, որտեղ ծագել է երկնային սֆերան համաստեղությունների բաժանելու գաղափարը։ Այնուհետև Օլիգոտը գտնում է, որ համաստեղություններին կենդանիների անուններ տալու հայրենիքը հավանաբար եղել է Փոքր Ասիան և Հայաստանը, այսինքն՝ այն տերիտորիան, որը սահմանափակված է Սև, Միջերկրական, Կասպից և Էգեյան ծովերով։

Վերոհիշյալ փաստարկները նույնպես խոսում են այն մասին, որ հավանաբար կենդանակերպների համաստեղությունների հասկացողությունը հայերին ավելի վաղ շրջանում է հայտնի եղել, քան եգիպտացիներին։ Բացի այդ, վերոհիշյալ փաստերը հիմք են ծառայում ասելու, որ հայոց տոմարով նոր տարվա սկիզբը Հայկ համաստեղության հելիոտիկ ծագման հետ կապելը ավելի հավանական է, որովհետև մոտավորապես առասպելական Հայկ նախահայր վաղնջական ժամանակներում է սկիզբ առել համաստեղություններին կենդանիների, հերոսների և աստվածների անուններ տալը։ Հնագույն հուշարձաններից, բաբելական հայտնի աղյուսակներից երևում է, որ ակկադացիներն և բաբելացիներին ծանոթացրել կենդանակերպների գաղափարանիշերի հետ, որոնք ակկադացիներին հայտնի էին դեռևս մ. թ. 3000 տարի առաջ։ Այստեղ ամենից հետաքրքրականն այն է, որ այդ ժամանակաշրջանում ակկադացիների պատկերած կենդանակերպները իրենց նշաններով համապատասխանում են ներկայումս մեզ հասած կենդանակերպների նշաններին։ Եգիպտացիների հնագույն հուշարձանների վրա հայտնաբերված տասներկու կենդանակերպների հիման վրա կարելի է համոզվել, որ աստղերի մասին ունեցած տեղեկությունները եգիպտացիները քաղել են քաղդեացիներից։ Բացի այդ, կարևոր է նշել նաև այն էական հանգամանքը, որ ըստ Հերոդոտի, առաջին անգամ եգիպտացիներն են հայտնաբերել տարին և այն բաժանել 12 ամսի, մի կարծիք, որը չի համապատասխանում բաբելական աղյուսակների տվյալներին։ Հայտնի է նաև, որ կենդանակերպների համաստեղություններից բացի, հնագույն շրջանում ամենից առաջ հայտնի էին Մեծ Արջ, Օրիոն-Հայկ և Պլեադներ համաստեղությունների անունները, որոնք պահպանվել են մինչև մեր օրերը։

Այսպիսով, վերը նշած կովանները հիմք են ծառայում հանգելու այն եզրակացության, որ հայերը իրենց տոմարը չեն ընդօրինակել եգիպտացիներից, այլ ունեցել են ինքնուրույն տոմար։ Ի միջի այլոց, հետագայում հայ ականավոր տոմարագետներ Անանիա Շիրակացին և Հովհաննես Իմաստասերը նույնպես ձգտել են հայոց տոմարը զարգացնել ուրույն կերպով, հնարավորին չափ խուսափելով օտար տոմարների նմանողությունից։

2. «Հայոց մեծ թվականը» սկսելու հարցի շուրջը

Հայտնի է, որ մեր թվականության VI դարի երկրորդ կեսի սկզբներին Հայաստանում տոմարը բարեփոխելու կարիք է զգացվել տոմարական հաշիվների մեջ առաջացած որոշ խառնաշփոթությունը վերացնելու համար։ Հայտնի է նաև, որ Նիկիայի եկեղեցական ժողովի որոշման համաձայն զատիկը պետք է տոնվեր Հուդյան տոմարով ամենաշուտը մարտի 22-ին և ամենաուշը ապրիլի 25-ին։ Նիկիայի եկեղեցական ժողովից հետո, 353 թ., տոմարագետ Անդ-

բնաս Բյուզանդացին կազմել էր 200 տարվա մի աղյուսակ, որի միջոցով հնարավոր էր որոշել զատկի տոնը մինչև 552 թվականը ներառյալ։ Այդ աղյուսակը օգտագործվել է 353 թ.։ Ըստ երևույթին, այդ աղյուսակը վերջացնելուց հետո, ինչպես զատկի, այնպես էլ մյուս կրոնական եկեղեցական տոները որոշելու հարցում տոմարական հաշիվների մեջ ինը տարի խառնաշփոթություն է տիրել, որը կանոնավորվել է 561 թ. Էաս Աղեքսանդրացու կազմած 532-ամյա աղյուսակի շնորհիվ։ Նման խառնաշփոթություն էր առաջ եկել նաև հայոց տոմարական հաշիվների մեջ, որի պատճառով տոմարի բարեփոխման անհրաժեշտությունն էր զգացվում։ Այդ կապակցությամբ 555 թ. մարտի 21-ին Ներսես Ը Բագրևանդցու կաթողիկոսության օրոք (548—557) Դվինում կայացած ազգային եկեղեցական տիեզերական ժողովում քննարկվել էր նաև տոմարի կարգավորման հարցը, սակայն վերջնական լուծում չէր ստացել։ Առաջացած խառնաշփոթությունից ազատվելու և տոմարական հաշիվները կարգավորելու համար տոմարագետ Էաս Աղեքսանդրացու ղեկավարությամբ 561 թ. հրավիրվել է տարբեր երկրներից 36 գիտուն տոմարագետների խորհրդակցություն, ուր հավանության արժանացավ Էաս Աղեքսանդրացու կազմած տոմարական աղյուսակը, որի շնորհիվ առհասարակ տոմարական հաշվումները խառնաշփոթ վիճակից բավականին պարզ դարձան։ Տոմարական հաշվումները կարդի բերելու համար հայերը, ամենայն հավանականությամբ, օգտագործել են Էաս Աղեքսանդրացու 532 տարվա պարբերաշրջանը։

Սակայն Հայաստանում օրացույցը կարգավորելու բարեփոխություն է կատարվել հետագայում, 584 թ., Դվինում գումարված եկեղեցական ժողովում, ուր ընդունվել է Էաս Աղեքսանդրացու հայտնաբերած 532-ամյա պարբերաշրջանը և «հայոց մեծ թվականը»։

Էաս Աղեքսանդրացու 532-ամյա շրջանը հայտնաբերելուց հետո էլ Հայաստանում տոմարական հաշիվների վիճակը ավելի քան 30 տարի չափազանց ծանր է եղել, կապված տոմարի շարժական լինելու և քաղաքական ու դավանաբանական բարդ իրադրության հետ։ Հետաքրքրական է այդ կապակցությամբ Օրմանյանի կարծիքը. «Ժողովին կողմե նախադասվեցավ Էասի ցուցակը, որ Կյուրեղի և Դեոսկորոսի և Տիմոթեոսի աթոռին հեղինակությունը կը կրեր, զորս կը պատվեր Հայ եկեղեցին, մինչ Իրիոնի ցուցակը կը պատկանէր Կոստանդնուպոլսո եկեղեցիին, որ քաղկեդոնականություններ հաստատած էր և կը պաշտպաներ։ Մեզ չէ հասած գրված մը՝ որ ցուցներ թե ինչպիսի կազմություն ուներ այդ առթիվ պատրաստված կամ նորոգված տոմարը»[7]։

Այսպիսով, անկասկած է, որ հայերը տոմարի բարեփոխություններ կատարել և Էասյան շրջանը ընդունել են 584 թ.։ Այս կապակցությամբ Լ. Խաչիկյանը Վանականի «Յաղագս տարեմտին ի Վանական վարդապետէ, ասացեալ» աշխատության ուշագրավ ծանոթագրության մեջ գրել է. «Մովսես Եղվարդեցի կաթողիկոսը 584 թվին Դվինում հրավիրում է եկեղեցական ժողով, որտեղ քաղաքական և դավանաբանական նկատառումներով ընդունեցին Էասյան (և ոչ իրիոնյան) շրջանը, հարմարեցնելով այն հայկական շարժական տոմարի պահանջներին»[8]։

---

7 Մ. Օրմանյան, Ազգապատում, էջ 772։

8 Լ. Խաչիկյան, Մատենադարանի գիտական նյութերի ժողովածու, Գ. 1, 1941, էջ 169։

Թեև հայոց տոմարի բարեփոխությունը կատարվեց և սկիզբ դրվեց նոր թվականությանը, սակայն սկզբնական շրջանում հայոց տոմարը զրեթե կիրառություն չունեցավ։

Հայոց տոմարի հիմնական հարցերից մեկը այն է, թե ե՞րբ է սկսվել «հայոց մեծ թվականը»։ Այս հարցի առթիվ գոյություն ունի երկու կարծիք։ Ոմանք առանց համապատասխան փաստարկումների այն տեսակետն են պաշտպանում, թե «հայոց մեծ թվականի» սկիզբը հանդիսանում է 552 թ.։ Հետևաբար ներկա թվականը հայոց մեծ թվականով արտահայտելիս և ընդհակառակն կատարելիս տարբերությունը պետք է համարել 551 տարի, ինչպես մինչև այժմ ընդունված է պատմական ժամանակագրության մեջ։ Օրինակ, 1962 թ., հայոց մեծ թվականով արտահայտված, հավասար է 1411-ի (1962—551=1411), իսկ հայոց մեծ թվականի 1380 թ., արտահայտված ներկա թվականով, հավասար է 1931-ի (1380+551=1931)։ Ահա թե ինչ է գրում «հայոց մեծ թվականի» սկզբնավորման վերաբերյալ Օրմանյանը. «...Հայոց թվականը անունով ճանաչված է և որուն սկիզբը կը նկատվի 552 տարին։ ...Երբ հայերը Էսայան նոր շրջանը սկսան գործածել, ուզեցին զայն Անդրեասյանի հետ կապել և նոր շրջանը անոր ավարտումեն սկսան հաշվել...։ Ահա այս նոր շրջանին տարիներն են, որ հայոց թիվ անունը առած են, զուցե այն պատճառով, որ շրջանի հաշվով տարիներ համարել՝ հայերու հատուկ սովորություն մը եղավ։ Ասկե ավելի պատճառ մը չենք գտներ 552-ե սկսող թվականը հայոց թիվ անվանելու»[9]։

Երկրորդ տեսակետի կողմնակիցները «հայոց մեծ թվականի» սկիզբը համարում են 553 թ.։ Համաձայն մեզ հասած տեղեկությունների, Անդրեաս Բյուզանդացու կազմած 200 տարվա աղյուսակի գործածությունը սկսվել է 353 թ. և ավարտվել 552 թ. վերջերին, որի անմիջական շարունակությունն է հանդիսացել Էաս Աղեքսանդրացու 561 թվականի, կազմած 532-ամյա պարբերաշրջանը, որի առաջին տարին համապատասխանում է 553 թ.։ Մի քանի հեղինակներ հիմնվելով միջնադարի նշանավոր տոմարագետների վկայությունների վրա, այն կարծիքն են հայտնել, որ հայոց մեծ թվականի սկիզբը պետք է համարել 553 թ.։

Վերջինիս հետ համակարծիք է նաև Ա. Աբրահամյանը, որը նույնպես զբաղվել է հայոց տոմարի հարցերով։ Նա, ելնելով 532 տարվա պարբերաշրջանից, ենթադրում է, որ հայոց մեծ թվականի առաջին տարին սկսվել է 553 թ., երբ վերջացել է Անդրեաս Բյուզանդացու կազմած 200-ամյա աղյուսակը և սկսվել է Էաս Աղեքսանդրացու կազմած 532-ամյա աղյուսակը, որը հայ մատենագրության մեջ կոչվում է ՇԼԲ աղյուսակ (ՇԼԲ—532)։ Այդ կապակցությամբ Ա. Աբրահամյանը նշում է, որ «Հայկական «մեծ» թվականն ահա սկզբը է առնում այս աղյուսակից, որի առաջին տարին սկսվում էր 553 թվականով։ Այս մասին են վկայում միջնադարյան մեր ականավոր բոլոր մատենագիրները՝ Հովհաննես Կոզեռը, Հովհաննես Իմաստասերը, Ստեփանոս Ասողիկը, Ստեփանոս Օրբելյանը, Կիրակոս Գանձակեցին, Մխիթար Այրիվանեցին և ուրիշներ»[10]։

---

9 Մ. Օրմանյան, Ազգապատում, էջ 572—573։

10 Ա. Աբրահամյան, Հայ գրի և գրչության պատմություն, էջ 263։

Ա. Աբրահամյանը այն կարծիքին է, որ հայոց տոմարում կատարված բարեփոխությունները տեղի են ունեցել 532-ամյա պարբերաշրջանների առաջին տարին։ Այսպիսի մոտեցումը տրամաբանական է և հաշվի է առնում այն հանգամանքը, որ էասի կազմած 532-ամյա աղյուսակները 1085 թ. վերջանալու պատճառով (553+532–1085), Հովհաննես Իմաստասերը կազմել է 532-ամյա շրջանի նոր աղյուսակ և այդ ժամանակվանից սկսվել է նոր թվական, որը օրացույցի պատմության մեջ կոչվում է հայոց «փոքր թվական»։ Իմաստասերի կազմած աղյուսակները վերջանալուց հետո նման աղյուսակներ են կազմվել նաև տոմարագետ Ազարիա Ջուղայեցու բարեփոխության ժամանակ։

Մեր կարծիքով «հայոց մեծ թվականը» սկսելու ժամանակի հարցը պարզաբանելու և ճիշտ որոշելու համար պետք է պարզել, թե էասյան 532-ամյա շրջանի կամ Շիրակացու տոմարագիտական աշխատություններում բերված նույն աղյուսակի առաջին տարին որ թվականին է համապատասխանում 552-ին, թե՞ 553-ին։ Տարվա վերադիրների և «ոսկե» թվերի միջոցով ստորև ցույց կտանք, որ 532-ամյա շրջանի առաջին տարին համապատասխանում է ոչ թե 552, այլ 553 թվականին։

Նախքան այդ հարցի պարզաբանումը անհրաժեշտ ենք համարում ծանոթանալ Շիրակացու 532 տարվա համար կազմած օրացույցի հետ։ Հայտնի է, որ Անաստաս կաթողիկոսի պատվերով, հավանաբար 665 թվականին, Շիրակացին զբաղվել է հայոց տոմարի կարգավորման հարցով։ Դրա համար էլ Շիրակացին հայոց շարժական տոմարը հռոմեական անշարժի հետ համապատասխանեցնելու նպատակով էասյան 532-ամյա շրջանի համաձայն կազմել է օրացույց ըստ հռոմեական ամիսների և դրան զուգահեռ՝ ըստ հայոց ամիսների, որտեղ բացի եկեղեցական-կրոնական տոներից, բավական մեծ ճշտությամբ տրված են եղել նաև գարնան առաջին լիալուսնի ժամանակները, տարվա վերադիրը և այլն։ Այսպիսով, Շիրակացին հիմնականում կանխում է տոմարի ապագայում առաջացած խառնաշփոթությունը։ Որ Շիրակացին իրոք օրացուցային հաշվումները կատարելու համար կազմել է 532-ամյա շրջանի օրացույց, երևում է նրա հետևյալ խոսքերից. «Եւ քանզի չեն տեղեակ բազումք թուոց, մանավանդ շինականք վասն այնորիկ հինգ հարիւր երեսուն և երկուց ամաց .. կազմեցի»[11]։

Այս կապակցությամբ ուշագրավ է Դրասխանակերտցու հաղորդած մի տեղեկությունը, ըստ որի Անաստաս Ակռոնցի կաթողիկոսը 665 թ. հանձնարարում է Ա անիա Շիրակացուն՝ «հայկական շարժական տոմարը դարձնել անշարժ, որը և «չաւ ի վերայ եղեալ յաջողեցաւ բարեձեալ ըստ բոլոր ազգաց պայմանի, անշուշտ՝ այսինքն հաստատուն յօրինել զկարգ հայկականս տօմարի»։ Սակայն կաթողիկոսի, ապա և Շիրակացու (արվեստավորի) մահվամբ խափանվեց տոմարական այդ կարևոր բարեփոխությունը[12]։ Շիրակացու նախաձեռնած գործը հետագայում՝ 1084 թ. կատարել է նշանավոր տոմարագետ Հովհաննես Իմաստասերը, այսինքն՝ հայոց շարժական տոմարը բարեփոխել է ու դարձրել անշարժ տոմար, մտցնելով նահանջ տարվա գործածությունը։

---

11 Ա. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 106։

12 Տե՛ս Մատենադարանի գիտական նյութերի ժողովածու, 1941, № 1, էջ 169։

Այժմ համապատասխան հաշվումների միջոցով ցույց տանք, որ «հայոց մեծ թվականի» առաջին տարի՝ համապատասխանում է 553 թ.։ Անանիա Շիրակացու կազմած 532 տարվա աղյուսակի համաձայն, ըստ հռոմեական օրացույցի առաջին տարվա վերադիրը հավասար է 30-ի (կամ ավելի ճիշտ կլինի ասել հավասար է զրոյի), վերջին տարվանը՝ 19-ի, իսկ ըստ հայոց ամիսների կազմած օրացույցում 532-ամյա շրջանի առաջին տարվա վերադիրը հավասար է 3-ի, վերջին տարվանը՝ 19-ի։ Շիրակացու որոշած վերադիրները հռոմեականից տարբերվում են այն պատճառով, որ Շիրակացին նահանջ տարիների ժամանակ նախորդ տարվա վերադրին 11-ի փոխարեն ավելացրել է 10 օր։

Այս կապակցությամբ տարվա վերադիրների միջոցով մեր կատարած ստուգումները հաստատում են, որ Շիրակացու օգտագործած էսսյան 532-ամյա շրջանի առաջին տարին համապատասխանում է ոչ թե 552, այլ 553 թվականին, որովհետև 553 թ. համար հռոմեական փոքր վերադիրը հավասար է Շիրակացու աշխատություններում հիշատակված 532-ամյա շրջանի առաջին տարվա վերադրին։ Դա կարելի է հաստատել կոնկրետ հաշվումների միջոցով։ Դրա համար պետք է իմանալ, թե հռոմեական «փոքր» կամ այսպես կոչված հունա-բյուզանդական տարվա վերադիրները որոշելու համար ինչպես հաշվե տարվա «ոսկե թվերը», այսինքն՝ թե տվյալ տարեթիվը լուսնի 19-ամյա շրջանի որերորդ տարին է։ Այստեղ հռոմեական «փոքր» վերադիրներն ենք օգտագործում այն պատճառով, որ Շիրակացու աշխատություններում բերված 532-ամյա շրջանի յուրաքանչյուր տարվա համար տրված է հռոմեական «փոքր» վերադիրների կամ հունա-բյուզանդական վերադիրների սիստեմը։ Տարվա «ոսկե թվերը» ստուգման կարգով որոշելու համար պետք է գտնել, թե նախքան մեր թվականի առաջին տարին լուսնի 19-ամյա շրջանի ո՞ր տարին է եղել կամ թե ինչի է հավասար եղել «ոսկե թիվը»։ Մեր կատարած ստուգումները ցույց են տալիս, որ դրա համար «աշխարհի ստեղծման» բյուզանդական թվականը 5508-ի փոխարեն համարել են 5509 թվականը (մ. թ. ա.) և այդ թվականի համար «ոսկե թիվը» եղել է հավասար 18-ի (5509։19 մնաց.=18)։ Դա նշանակում է, որ մեր մեր ներկա թվականի առաջին տարվա «ոսկե թիվը» հավասար է եղել 19-ի (5509+1։19 մնաց.=0)։ Զրո մնացորդի դեպքում կարելի է գրել 19, որը հանդիսանում է լուսնի շրջանի վերջին տարին, երբ «ոսկե թիվը» հավասար է լինում 19-ի։

Այժմ մեզ հետաքրքրող 553 թ. «ոսկե թիվը» գտնելու համար պետք է «աշխարհի ստեղծման» բյուզանդական 5509 թ. ավելացնել 553 թ. և գումարը բաժանենք 19-ի վրա, բաժանումից ստացված մնացորդը կլինի 553 թ. «ոսկե թիվը», որը տվյալ դեպքում հավասար է 1-ի (5509+553։19 մնաց.=1)։ Հաշվումներն ավելի հեշտացնելու նպատակով ինչպես այս դեպքում, այնպես էլ մյուս բոլոր դեպքերում կարելի է 5509-ի փոխարեն ավելացնել 18, դարձյալ կստացվի նույն արդյունքը, որովհետև երկու դեպքում էլ բաժանվում է 19-ի վրա։ Օրինակ, 553+18։19 մնաց.=1-ի։

Այնուհետև, 553 թ. տարվա վերադիրը գտնելու համար օգտագործել ենք հույն գիտնական Մետոնի հայտնաբերած լուսնի շրջանի հիման վրա տարվա վերադիրը «ոսկե թվերի» միջոցով որոշելու եղանակը, ըստ որի, վերադիրները «ոսկե թվերի» միջոցով որոշում են ստորև բերված պարզ աղյուսակի միջոցով, որտեղ վերին տողում գրված է «ոսկե թվերի» շարքը՝ 1—19, իսկ ներքևում գրված են «ոսկե թվերին» համապատասխան տարվա վերադիրները։ Աղյուսակից

պարզ երևում է, որ իրար հաջորդող «ոսկե թվերը» միմյանցից տարբերվում են 1-ով, իսկ վերադիրները՝ 11-ով, բացառությամբ վերջին վանդակում դրված վերադրի, որը իր նախորդից 11-ի փոխարեն տարբերվում է 12-ով, այդպես է արված, որպեսզի առաջացած սխալը հնարավորին չափ փոքրացվի, այսինքն՝ 19-ամյա շրջանի նախավերջին տարվա վերադրին 11 ավելացնելու փոխարեն ավելացված է 12 օր (ստացված տվյալները ճիշտ են հին տոմարով)։

Ոսկե թվեր	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19
Վերադիրներ	30	11	22	3	14	25	6	17	28	9	20	1	12	23	4	15	26	7	19

Քանի որ աղյուսակում 1 «ոսկե թվին» վերադիրների շարքում համապատասխանում է 30-ը, նշանակում է 553 թ. տարվա վերադիրը հավասար է եղել 30-ի, այսինքն՝ այնքան, որքան է էաս Աղեքսանդրացու հայտնաբերած 532-ամյա շրջանի առաջին տարվա վերադիրը, որ բերված է «Շիրակացու մատենագրությունը» աշխատությունում[13]։ Իսկ 552 թ. ո՛չ «ոսկե թիվը» և ո՛չ էլ վերադիրը չեն համընկնում 532 շրջանի առաջին տարվա վերադրի և «ոսկե թվի» հետ, որովհետև 552 թվականի «ոսկե թիվը» հավասար է 19-ի (552+18։19 մնաց.=0-ի, ինչպես ասացինք, զրոյի փոխարեն կարելի է վերցնել 19-ը)։ Նշանակում է 552 թ. վերադիրը նույնպես հավասար է եղել 19-ի, որովհետև աղյուսակում 19-ը «ոսկե թվին» համապատասխան վերադիր հավասար է 19-ի։ Հետևաբար 552 թ. չի կարող համարվել 532-ամյա շրջանի առաջին տարին։ Ուրեմն Շիրակացու աշխատություններում մեզ հասած էասյան 532-ամյա շրջանի առաջին տարին, անկասկած, համապատասխանում է 553 թվականին։

Այսպիսով, ստացված արդյունքները բերում են այն հետևության, որ «հայոց մեծ թվականը» 553 թ. սկսելը անվիճելի է դառնում։ Մեր կարծիքով ներկա թվականի և «հայոց մեծ թվականի» տարբերությունը 551 տարի ընդունելը սխալ է։ Այս երկու թվականները մեկը մյուսով արտահայտե ու համար պետք է 551 տարի դումարելու կամ հանելու փոխարեն վերցնել 552 տարի, այսինքն՝ «հայոց մեծ թվականի» առաջին տարին համարել ոչ թե 552 թ., այլ 553-ը։ Պետք է ի նկատի ունենալ, որ համապատասխան տոմարական և ժամանակագրական հաշվումներ կատարելիս հայ մատենագիրներ Ստեփանոս Ասողիկը, Սամվել Անեցին և ուրիշներ նույնպես այդ թվականն են հիմք ընդունել։ Այս ամենը ի նկատի առնելով «հայոց մեծ թվականի» սկիզբը պետք է անվիճե իորեն համարել 553 թվականը։

Վերջում անհրաժեշտ ենք համարում մի քանի խոսքով կանգ առնել ևս մի հետաքրքիր հարցի վրա։ Դա այն է, թե ինչո՞վ է պայմանավորված 553 թվականից հայոց նոր թվական սկսելը։

Վեցերորդ դարի կեսին նոր թվական սկսելը, մեր կարծիքով, պետք է հիմնականում կապված լիներ իր ժամանակի համար խոշոր նշանակություն ունեցած որևէ պատմական, քաղաքական կամ դավանաբանական իրադարձության հետ։ Ըստ այդմ անհավանական չէ, որ նոր թվագրություն սկսելը կարող էր առնչված լինել հայ և բաղկեդոնական եկեղեցիների դավանաբանական վեճերի սրման հետ։

---

[13] Ա. Արրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 264։

ОБ АРМЯНСКОМ КАЛЕНДАРЕ

Г. С. БАДАЛЯН

(Резюме)

В статье рассматриваются два вопроса: наличие у древних армян самостоятельного календаря и уточнение времени создания «армянского великого летоисчисления».

Относительно первого вопроса некоторые авторы придерживаются того мнения, что армяне в древности самостоятельного календаря не имели, а заимствовали его у египтян. С этим мнением нельзя согласиться, так как изучение древнеармянского календаря приводит к выводу, что армянский по сравнению с египетским является более подробным и совершенным. В египетском календаре вместо семидневной недели применялись десятидневные недели, а в армянском с древнейших времен применялась только семидневная неделя, причем тридцать дней месяца имели отдельные наименования армянского происхождения и в основном связаны с именами тех географических местностей, которые, по всей вероятности, являлись центрами древнего языческого религиозного культа. В армянском календаре даже суточные 24 часа носили отдельные имена. Подобные наименования в египетском календаре не встречаются. Кроме того, между названиями месяцев в египетском и армянском календарях нет никакого сходства. Известно, что вопрос о делении года на двенадцать месяцев связан с разделением зодиака на двенадцать знаков, что сыграло значительную роль в истории развития календаря. Для выяснения интересующего нас вопроса чрезвычайно важно знать, у каких народов, когда и где возникла впервые идея о зодиакальных фигурах, изображающих созвездия. По утверждению Олькота, эта идея, по всей вероятности, зародилась в Малой Азии и Армении. Все эти факты дают основание заключить, как указано выше, что армяне в древности свой календарь не заимствовали у египтян, а создали его самостоятельно.

Относительно начала «армянского великого летоисчисления» существуют две точки зрения. Первая состоит в том, что ряд ученых бездоказательно придерживается того мнения, что началом «армянского великого летоисчисления» является 552 год нашей эры. В этом случае для выражения армянского летоисчисления нынешним летоисчислением и наоборот разницу берут в 551 год, как это до настоящего времени принято в исторических хронологиях. Другая точка зрения состоит в том, что за начало «армянского великого летоисчисления» принимают 553 год, однако этот вопрос до сего времени остается спорным. Соответствующие исчисления показывают, что первый год периода 532, составленного Эассом Александрийским, соответствует не 552-му, а 553 году, и годовой эпакт последнего, согласно нашим исследованиям, равняется 30-ти. При-

веденный в трудах Анания Ширакаци эпакт первого года 532-го периода Эасса Александрийского также равняется 30-ти, а это означает, что первый год 532-го периода Эасса Александрийского действительно соответствует 553 году и является непосредственным продолжением 200-летней таблицы Андреаса Византийского. Таким образом, для выражения «армянского великого летоисчисления» современным летоисчислением и наоборот необходимо взять 552, а не 551.